

Անցեալ Փետրուար ամսոյ 22ին կարճատև հիւծական հիւանդութիւնից յետոյ վախճանեցաւ Ս. Էջմիածնի միաբան

ԵՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԷԶԵԱՆ

մօտ 50 տարեկան հասակում։

Հանգուցեալը Կ. Պոլսոյ ընիկ բնակիչ էր, և իւր կրթութիւնն և ուսումն ստացած էր Կ. Պոլսոյ հոգևոր դպրոցների մէջ. մի քանի տարի ևս իբրև աշխարհական միաբան բնակած էր Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքում։

1876 թուին գալով Մայր Աթոռս՝ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթուղիկոսի հրամանաւ ընդունուեցաւ միաբան Ս. Էջմիածնի։ 1877 թուին հանգուցեալ Կաթուղիկոսի հրամանաւ ստացաւ Աբեղայութիւն Վեհապետեան Պետրոս Եպիսկոպոսի ձեռնադրութեամբ և 1878ին ստացաւ վարդապետական Գաւազանի Մասնաւոր իշխանութիւն։ Հանգուցեալը Մայր Աթոռոյս մէջ կատարել է Տնտեսութեան և Հիւրընկալութեան պաշտօններ։ Փետր. ամսոյ 24ին թաղուեցաւ Միաբանից գերեզմանատանը պատշաճաւոր հանդիսիւ։

Յաւաք սրտի լսեցինք, որ անցեալ Փետրուարի 5ին Խարկովում իւր թարմ հասակում վախճանեցաւ անուանի Հայ Մանկավարժ

ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԸ։

Յաւալի՜ կորուստ։

Լուսաւորեսցէ Տէր զհոգիս հանգուցելոցն։